

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗРАБОТКИ КОНКУРЕНТНОЙ
СТРАТЕГИИ ПРЕДПРИЯТИЯ**

В. О. Аракелян

А. Л. Мелконян

А. А. Саркисян

В статье обсуждается разработка процедур для конкурентной стратегии в современных рыночных отношениях и предлагается новый подход, который учитывает изменения внешней и внутренней среды предприятия.

MODERN PROBLEMS OF DEVELOPING A COMPETITIVE STRATEGY OF ENTERPRISES

V. H. Arakelyan

A. L. Melkonyan

A. A. Sargsyan

In the article the working out of procedures of competitive strategy in modern market relations is discussed and the new approaches are offered which considered changes of the external and internal environment of the enterprise.

**ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

Վ. Յ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հ. Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Ա. Հ. ԴՈՆՈՅԱՆ

ԴՊԵՅ ասպիրանտ

Մ. Ժ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԴՊԵՅ ասպիրանտ

Նորամուծական գործընթացի խրախուսման ֆինանսատնտեսական մեխանիզմի ձևավորումը երկրի տնտեսության տարբեր հատվածներում իրականացնելիս անհրաժեշտ է հիմնվել զարգացած շուկայական հարաբերություններ ունեցող երկրների փորձի վրա, քանի որ մեր հանրապետությունում նորամուծական քաղաքականությունն՝ առաջին՝ անբավարար է, երկրորդ՝ կապված է շուկայական գործիքների հետ: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հանրապետության տնտեսության առանձնահատկությունները, առաջարկի և պահանջարկի, կոմերցիոն ռիսկի մակարդակի, ցածր կամ թույլ նորամուծական ենթակառուցվածքի, օրենսդրական ակտերի բացակայության և դատաիրավական համակարգերի գործունեության ցածր մակարդակի, շուկայի և պետական կա-

ռույցների նկատմամբ անվստահության ամբողջությունը:

Նորամուծական գործունեության ֆինանսավորման համակարգը բաղկացած է իրար հետ փոխկապակցված աստիճանական ենթակայության և առանձնահատուկ գործառնության խնամքից և իր մեջ ներառում է՝

- նորամուծական գործունեություն իրագործելու համար ֆինանսական միջոցների մուտքերի աղբյուրները (ֆինանսավորման գործընթաց),
- միջոցների կենտրոնացումը տարբեր աղբյուրներից և հավաքագրված կապիտալի ներդրման մեխանիզմը,
- ներդրումների գծով վերահսկման մեխանիզմը,
- նորամուծական գործընթացի իրականացման համար կանխավճարային միջոցների վերադարձման մեխանիզմը:

Նորամուծական գործունեության ֆինանսավորման կազմակերպման առանձնահատկություններից են ինչպես ֆինանսավորման աղբյուրների, նորամուծական գործընթացի ընդգրկման ուղղությունները, այնպես էլ նրա սուբյեկտների բազմազանությունը:

Նորամուծական ծրագրերի իրականացման ֆինանսական արդյունքների աճը հանդիսանում է կարևոր ընդհանրացնող ցուցանիշ, որի հիման վրա որոշվում են նորամուծական գործունեության վերջնական արդյունքը և ֆինանսական քաղաքականությունը, որն իրականացնում են ինչպես տնտեսվարող սուբյեկտները, այնպես էլ դրանց համալիրը (պետությունը):

Հարկ է նշել, որ համախառն ազգային կապիտալի ամենամեծ բաժինը, որն սպասարկում է նորամուծական գործունեությունը, կարող է հանդես գալ պետական, փոխառու արտասահմանյան կապիտալների, տնտեսվարող սուբյեկտների սեփական կապիտալի և արժեթղթերի ներդրումների ձևով:

Ներդրումները, որոնք ուղղված են նորամուծությունների, մեր կարծիքով, կարելի է դասակարգել հետևյալ բնութագրերով՝

1. Նորամուծական գործունեությանն ուղղված ներդրումների և վերահսկման ուղղակի ձև, որն իր մեջ ներառում է անիջականորեն ներդրված ֆինանսական, մտավոր և այլընտրանքային այլ միջոցները նորամուծությունների արտադրության կամ իրական ակտիվների ձեռքբերման համար, և պորտֆելային, երբ ձեռք են բերվում արժեթղթեր կամ տրամադրվում են միջոցներ վարկերի ձևով:

2. Ներդրումների տեսակները՝ ֆինանսական կամ դրամական միջոցների և դրանց համարժեքների (նպատակային ներդրում, շրջանառու միջոցներ, արժեթղթեր, փայեր, փոխառություններ և այլն) ներդրումներ, մտավոր ներդրումներ, գույքային իրավունք:

3. Սեփականության ձևերը՝ պետական, մունիցիպալ, մասնավոր, խառը:

4. Հատկացումների պայմանները՝ արտոնյալ, ոչ արտոնյալ:

5. Հարաբերությունները՝ բաց տնտեսական համակարգեր, ռեզիդենտներ, ոչ ռեզիդենտներ:

6. Ֆինանսական ապահովվածությունը՝ այլընտրանքային միջոցներ, վենչուրային, լիզինգային, ֆակտորինգային, համատեղ փայային:

Հարկ է նշել, որ նորամուծությունների ֆինանսավորման համար հիմնական աղբյուրներ են հանդիսանում.

- դաշնային և տարածքային մակարդակով բյուջետային հատկացումները,

- ԳՀՓԿԱ-ի ֆինանսավորման ոչ բյուջետային ֆոնդի հատուկ միջոցները, որոնք ստեղծվում են կազմակերպությունների և տարածքային կառավարման մարմինների կողմից,

- տարբեր տիպի կորմեցիոն կառույցների (ֆինանսա-արդյունաբերական խումբ, ներդրումային ընկերություն, առևտրային բանկեր և այլն) կողմից տրամադրված ֆինանսական միջոցները,

- վարկավորման միջոցները, որոնք տրվում են կառավարության կողմից լիազորված ներդրումային բանկերից,

- կոնվերսիոն վարկերը նորանուծական նախագծերի իրականացման համար,

- արտասահմանյան ներդրումները,

- հայրենական և արտասահմանյան գիտական նորանուծությունների ֆոնդերի միջոցները,

- ֆիզիկական անձանց սեփական կուտակումները:

Արտասահմանյան փորձը վկայում է, որ անկայուն տնտեսական համակարգերը, որոնց բնորոշ է արժեզրկման բարձր մակարդակը, իրենց բացասական ազդեցությունն են ունենում տնտեսական գործակալների վարքի ու նորանուծությունների իրականացման նպատակով պետության կողմից տնտեսական լծակների կիրառման հնարավորությունների վրա՝ դրանք մղելով երկրորդ պլան:

Այս պայմաններում զլխավոր դերը պատկանում է խրախուսման անուղղակի լծակներին, ինչպիսիք են՝ հարկային զեղչերը, վարկերը, վարկային տոկոսները, ապահովագրությունը, ամորտիզացիոն հատկացումները և այլն: Նշված անուղղակի ֆինանսական լծակների շնորհիվ խրախուսման ազդեցության աստիճանը կախված է տնտեսական համակարգում առաջարկի և պահանջարկի ամբողջականությունից և այդ լծակների բնույթից ու տարբերություններից:

Արտադրական համակարգերում նորանուծական գործընթացի ակտիվացման անուղղակի խրախուսման լծակներից են հանդիսանում հարկերը և վարկերը (մասնավոր վարկավորման ֆինանսական ռեսուրսները և պետական վարկերը): Ամորտիզացիոն հատկացումները, ի տարբերություն վարկային ռեսուրսների, գտնվում են կոնկրետ արդյունաբերական ճյուղի պահանջարկի մակարդակի խիստ ազդեցության տակ, ուստի դրանք միանշանակ հանդես չեն կարող գալ որպես նորանուծությունների տարբեր խմբերի խրախուսման մեխանիզմ:

Ապահովագրությունը՝ որպես նորանուծությունների խթանման լծակ, արդյունավետ է զարգացած ենթակառուցվածքների և նորմատիվային-իրավական բազայի առկայության դեպքում:

Ինչպես արդեն նշել ենք, մեր հանրապետությունում շատ ցածր է նորանուծական ակտիվությունը, որը պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնք արգելակում են նորանուծությունների արմատավորմանը ինչպես արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման, այնպես էլ տնտեսության ոլորտում ընդհանրապես:

Այդ պատճառներն են.

Առաջին՝ նորանուծությունների իրական պահանջարկի բացակայությունը, երբ տնտեսությունը կարիք չունի կամ էլ ի վիճակի չէ օգտագործել գիտական

մշակումների արդյունքները՝ կապված մրցակցային թույլ մեխանիզմի հետ:

Երկրորդ՝ պատվիրատուների անվճարունակությունը, որը պայմանավորված է բնակչության եկամուտների ցածր մակարդակով. նրանց մեծամասնությունը հնարավորություն չունի վճարելու բարձրորակ արտադրանքի համար, իսկ կազմակերպությունները հնարավորություն չունեն ձեռք բերել առաջավոր տեխնոլոգիաներ և տեխնիկական միջոցներ:

Երրորդ՝ տնտեսության մեջ ցածր է նորամուծական ակտիվությունը, որը հնարավորություն չի ընձեռում ստեղծելու մրցունակ արտադրատեսակներ, որոնք հնարավոր է իրացնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Չորրորդ՝ նորամուծական ոլորտում բարձրորակ մասնագետների պակասը:

Հինգերորդ՝ կոմերցիոն բարձր ռիսկերը, որոնք թույլ չեն տալիս իրականացնել ներդրումներ այդ ոլորտում:

Վեցերորդ՝ պետական արդյունավետ նորամուծական քաղաքականության բացակայությունը:

Ուստի անհրաժեշտ է, որ կազմակերպությունների ղեկավարները, ելնելով առաջավոր երկրների ֆիրմաների փորձից, մշակեն այնպիսի ռազմավարական ծրագրեր, որոնք հնարավորություն կտան իրականացնել արդյունավետ նորամուծական ռազմավարություն, ինչը կարող է օգնել կազմակերպություններին՝ ապահովելու մրցակցային առավելություն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վ. Գ. Առաքելյան և ուրիշներ**, «Նորամուծությունների կառավարում»: Ուսումնական ձեռնարկ (Վ. Գ. Առաքելյան, Դ. Մ. Ղուկոյան, Վ. Գ. Ջազեյան, Ա. Բ. Մելտոնյան, Գ. Լ. Գրիգորյան), Հեղինակային իրատարակություն, Երևան, 2008:

2. **Ю. П. Морозов**, Инновационный менеджмент, М., Юнсети-ДАНА, 2000.

3. **Б. Твисс**, Управление научно-техническими нововведениями, М., Экономика, 1989.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ ФИНАНСОВЫХ ИСТОЧНИКОВ НОВОВВЕДЕНЧЕСКОГО ПРОЦЕССА

В. О. Аракелян

Օ. Գ. Տուխասյան

Ա. Դ. Դրոյան

Մ. Զ. Տիմոնյան

В статье выявлены источники финансирования нововведенческого процесса и рассмотрены проблемы управления данным процессом.

ISSUES BASED ON CREATION OF FINANCIAL SOURCES OF INNOVATION PROCEDURES

*V. H. Arakelyan
H. H. Sukiasyan
A. H. Drnoyan
M. Zh. Simonyan*

Financial sources of innovation procedures are revealed and management basic issues of innovation is discussed.

**ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ ԴԵՐԸ
ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Վ. Հ. ԱՐԱՔԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ. Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԳՊՀ դասախոս, ասիստենտ
Մ. Ժ. ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՊԵՀ ասպիրանտ

Վենչուրային ֆիրմաները իրենցից ներկայացնում են ժամանակավոր կազմակերպչական կառուցվածքներ, որոնք զբաղված են գիտական մտքերի մշակմամբ և նոր տեխնոլոգիաների և արտադրանքների վերածմամբ: Այդ ֆիրմաները ստեղծվում են փորձարկման և լրացուցիչ մշակման շնորհիվ՝ ռիսկային նորամուծությունները հասցնելու մինչև արդյունաբերական իրացման:

Ժամանակակից փոքր վենչուրային կազմակերպություններն իրենցից ներկայացնում են ճկուն և շարժուն կառուցվածքներ, որոնք տարբերվում են առավել բարձր նպատակամետության: Դա բացատրվում է նրանով, որ ինչպես կազմակերպության աշխատակիցները, այնպես էլ ներդրողներն անմիջականորեն շահագրգռված են արագ իրացնելու իրենց կողմից մշակված մտքերը, տեխնոլոգիաները, օբյեկտները, հայտնագործությունները՝ հնարավորինս նվազագույն ծախսերով: Վենչուրային ֆիրմաներն ստեղծվում են պայմանագրային հիմունքներով դրամական միջոցների հավաքագրման և, որպես կանոն, մի քանի իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (կամ երկուսը միասին), կամ էլ խոշոր ընկերությունների, բանկերի, անձնական միջոցների և պետության կողմից ներդրումների ու վարկերի տրամադրման շնորհիվ: Ներդրումները ֆիրմային տրամադրում են անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ դրանք նրա կանոնադրական կապիտալում ներդնելու միջոցով: Դրա դիմաց մասնակիցներն ստանում են նախապես պայմանավորված բաժինը ֆիրմայի սեփական կապիտալից, որը նա տնօրինում է մինչև այն պահը, երբ կվաճառի այն և կստանա շահույթ: